

Վիկտորյա Վասիլյան

Արվեստի պատմության և տեսության ամբիոնի հայցորդ

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՆԱԳՈՒՅՆ ՆԱԽԱՏԻՊԵՐԸ

Կնոջ կերպարը դեռևս հնագույն ժամանակներից եղել է ոգեշնչման աղբյուր, և տարբեր երկրներում գոյություն է ունեցել կանացի պաշտամունք: Կինը հանդիսացել է հայրենիքի, մայր հողի, ազատության, կյանքի հարատևության, հաղթանակի խորհրդանշ: Կանացի կերպարով հանդես եկող աստվածուհիները համարվել են քաղաքների ու երկրների պահապան: Այս ավանդույթը վերածնունդ ապրեց 1945 թ.-ից հետո խորհրդային արվեստում: Խորհրդային երկրներում հիմնվեցին «Մայր հայրենիք» և Հայրենական պատերազմը գովերգող «Հաղթանակի հուշակոթողներ»: Նույնիսկ ՀՀ դարի երկու Համաշխարհային պատերազմները չվերացրեցին կնոջ հիեալը և հզոր պաշտամունքը: Պատերազմի ավարտից հետո ամբողջ Խորհրդային Միությունում սկսեցին կանգնեցնել Մայր-հայրենիքը և երկրի ազատությունը խորհրդանշող կանացի անձնավորումներ (խորիս և անպարտելի, դյուցազուն և ռազմիկ, ողբացող մայր և վրիժառու կին, հայրենիքի պաշտպան և օջախի պահապան): Այդպիսի մոնումենտալ հուշարձաններ այսօր կան Ռուսաստանում, Գերմանիայում, Լատվիայում, Վրաստանում, Լեհաստանում, Հայաստանում և այլուր: Երկրի ազատությունն ու հզորությունը խորհրդանշող այդպիսի մոնումենտալ հուշարձաններ են կանգնեցվել նաև Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և այլն:

Հուշարձաններից վեր խոյացող Հաղթանակի կերպարը արեիստ Նիկեն¹ էր՝ կանգնած այն երկրներում, որոնք թե՝ ինքնակամ (ինչպես Հարավսլավիան), թե՝ հարկադրված ընդունել էին մատերիալիստական-լենինյան տեսանկյուն: Դա անթև կանացի աստվածուհու մի կերպար էր՝ մարտնչող կեցվածքով, որի վրայից սահուն էր հագուստը՝ մերկացնելով կուրքը: Վարշավայից սկսած՝ «Կարմիր» կանացի անձնավորումները հայտնվուն են Փարիզի Հաղթակամարի Ռյուտի Մարսելիոդի կեցվածքը հիշեցնող ռազմատենչ ու հաղթական «Մայր Հայաստանի» կերպարանքով: Հայաստանում այդպիսի կանացի անձնավորում է Արա Հարությունյանի կերտած «Մայր Հայաստանը» արհավիրքի պահին հայրենիքի պաշտպանության համար ոտքի ելած կնոջ կերպարն է՝ ոտքերի մոտ վահան, ձեռքին՝ սուր, հագին՝ զենք ու զրահ, հայացքը հառած խորիստաբար դեպի հավերժություն: Նա մի ոտքով կարծես առաջ է շարժվում, հզոր ու անպարտելի՝ պատրաստ հայրենիքի պաշտպանության համար կրիվ մղել ոսուխի դեմ: Մինչև Արա Սարգսյանի՝ «Մայր Հայաստանին» անդրադարձանալը, սկսենք նրա հնագույն ակունքներից:

Կնոջը պատկերող վերին պալեոլիթի արձանիկներից մինչև ուշ ժամանակաշրջանում մշակված արձանները առաջին հերթին գովերգուն են մայրության,

¹ Հաղթանակի անձնավորում: Հեսփողոսի մոտ՝ տիտան Պալլանտի և Ստիգմի դուստրը, Եռանդի, Համառության և Ռւժի քույրը: Նիկեն ոչ միայն պատերազմի և հաղթանակի աստվածուհին է, այլև մրցությունների հայրանակի: Հաճախ Նիկեի արձանը հաղթանակից հետո նվիրաբերվել է Արենակն: Արվեստում Նիկեն պատկերվել է որպես թևավոր դափնեպսակով աղջիկ՝ հաճախ կրնատ: Հռոմում Նիկեին էր համապատասխանում Հաղթանակող Վիկտորյան:

պտղաբերության, բնության կենդանի էությունը: Մայրը համարվում էր սերնդի շարունակող, սրբազնում էր, արտացոլվում արվեստում և պատկերագրության մեջ:

Մայր աստվածությունը միաժամանակ միավորում է աստվածությունների որոշ հատկանիշներ: Մայրության երևույթը մոգական նշանակություն ուներ: Այդ հզոր աստվածությունը տարբեր անուններով է հանդես գալիս Սիցերկրածովյան ազգերի և Հարավային Ասիայի ժողովրդների մոտ. **Անահիտ՝** Հայաստանում և Իրանում, **Աստարտե՝** Սիրիայում, **Սաւա՝** Կապաղովկիայում, **Կիրելլա՝** Փռուգիայում, **Թանատիս՝** Անատոլիայում, **Նանա՝** Պաղեստինում, **Արտեմիս՝** Եփեսոսում, **Աֆրոդիտե՝** Կիպրոսում, **Իզիդա՝** Եգիպտոսում, **Իշտար՝** Բարելոնում, **Աղիտի՝** հնագույն Հնդկաստանում և այլն¹: Այդ աստվածությունը պատկերվում էր մերկ, ընդգծված բարեմասնություններով, ծերքերը սովորաբար խաչված էին կամ վերև բարձրացված՝ օրինության նշանակությամբ (այսպէս պատկերում էին Աստվածամորը քրիստոնեական Եկեղեցիներում, աղավնիները նստում էին նրա գլխին, օձերը պարուրում էին մարմինը. այս ամենը անցած տոտեմական և ֆետիշական փուլի հետևանք էր):

Եվ միայն այն ժամանակ, երբ Մայր աստվածությունը միաժամանակ վերածվում է մեծագույն, հզոր աստվածուհու, որը գլխավորում է բոլոր էակներին, դաշնում է հովանավոր և տիրակալ, մենք կարող ենք ենթադրել հասարակության մեջ կնոջ դերի մեծացման մասին: Թագավորներն ու թագուհիները սկսեցին հանդես գալ տարբեր երկրներում աստվածությունների անուններով և կերպարներով:

Սակայն քրիստոնեության ընդունումից հետո ամեն ինչ կտրուկ գլխիվայր փոխվեց: Քրիստոնեությունը կնոշից պահանջում էր հնագանդություն և արգելեց կրոնում կուռքարարությունն ու երկրպագությունը, իսկ միջնադարում կինը հանարվեց մարդկային մեղքի մեծագույն մեղավոր: Նույնիսկ տիեզերական ժողովներում Քրիստոսին ծնող Մարիամը չէր առանձնացվում մյուս կանացից և չէր դիտարկվում որպես «Աստվածամայր»: Միայն Եփեսոսի ժողովից հետո՝ 5-րդ դարում (431 թ.), Մարիամը համարվեց «Աստվածամայր» և «Երկնային թագուհի»:

Արվեստում մեծ ծաղկում է ապրում նրա կերպարի շուրջ պատկերագրությունը: Քաղեդրոնյան և Եփեսոսյան տիեզերական ժողովների որոշումներից հետո ողջ քրիստոնեական աշխարհով տարածվում է Տիրամոր պաշտամունքը, որը որդեգրում է հեթանոսական աստվածուի պատկերագրական մի շարք հատկանիշներ:

Տիրամոր և մամկան պատկերագրությունը ծագում է Եգիպտական Իզիդա և Գոռ աստվածությունների պատկերումից՝ Երկնային աստվածուի նստած գահի վրա, որի գրկում աստվածորդին է²:

Դարձ է նշել, որ Տիրամոր կերպարը ձևավորվեց ինչպես ավետարանչական նկարագրությունների, այնպես էլ տվյալ տարածքներում կանացի պաշտամունքային կերպարների հետ միաձուլման արդյունքում: Արվեստում հանդիպող բազմաթիվ կերպարներում շեշտը դրվում էր ոչ թե գեղեցկության և զգացմունքային սիրո գաղափարների վրա, այլ Աստվածածնի՝ «Անաղարտ կույսի», «Մոր և ստնտուի», «Երկնային Տիրամոր և ողբացող մոր» կերպարի վրա: Եթե սիրո, պատերազմի և հաղթանակի աստվածուի հերք հանդիսանում էին Երկրների և քաղաքների հովանավորներ, ապա Տիրամայրը հանդես եկավ որպես ամբողջ մարդկության «Մեծագույն

¹ Տես Ամերիկա Դոնին, Լիու, արքաներ, մ., 1966 թ., ս. 102-103:

² Նույն տեղում, էջ 103-104:

մայր», «Ստնտու», «Փրկիչ»: Նա ներկայացնում էր երկնային եկեղեցին, հանդես էր գալիս որպես ամբողջ մարդկության հովանավոր և փրկության բարեխոս:

Սայր աստվածուիու հնագույն նախատիպերը: Դեռևս բրոնզեդարյան ժամանակաշրջանից՝ Թալինից, Ագարակից, Շենգավիթից, Յարիծից, Մոխրաբլուրից, Տավուշից և այլ վայրերից հայտնաբերվել են կանացի կուռքերի բրոնզյա արձանիկներ, որոնք ներկայացնում են ռազմի աստվածուիու հատկանիշներ՝ տղամարդու դիմագծերով, հաճախ սաղավարտով, միաժամանակ հյուսքերով և պտղաբերության եղջյուրներով: Սովորաբար այս արձանիկները գտնվել են ռազմի աստծո պաշտամունքային վայրերում, որոնք ներկայացնում էին նաև մետաղագործության և պատերազմի հովանավոր աստվածություններ:

Հնուց ի վեր մեզանում կերտվել են կանացի արձաններ, բարձրաքանդակներ, հարթաքանդակներ և այլն: Մ.թ.ա. 12-5-րդ դդ. բազմիցս հանդիպում ենք կոնց բրոնզյա մանրաքանդակներ Ագարակից, Մոխրաբլուրից, Դվինից, Նոյեմբերյանից, Թալինից, Շենգավիթից, և կանացի գլուխներով պսակված սյունածկ քանդակներ՝ պսակված բուսական զարդանախշերով:

Ավանդական-պայմանական ոճի կանացիակերպ կուռքեր են հայտնաբերվել Մեծանորից, Դվինից և այլ վայրերից, որոնց պատկերման մեջ գլխավորապես շեշտված են նրանց սեռական պտղաբերության հատկանիշները, իսկ սիւնատիկ կատարումը վկայում է աստվածության խորհրդանշական բնույթի մասին:

Հայաստանում մոր և կոնց գաղափարի մեջ տեսել են ընտանիքի պահապանի, ազգի սկզբնավորման, խնամակալի ու հովանավորի հատկանիշներ: Կանացի այլաբանությունները, որ հայտնի են դիցաբանությունից և հեքիաթներից, ինչպես նաև պատմական նշանավոր կերպարներ անձնավորում էին բնությունը (գետեր, լճեր, ծովեր) կամ աշխարհագորական տեղանքները (քաղաքներ, ամրոցներ, շրջաններ): Այդ կուռքերը կոչված էին ներկայացնելու բնության հետ կանաց նույնացումը, բայց դրանք հավասարապես գործում էին որպես նվաճված տարածքների ընտելացման նշաններ: Հստակորեն ընդգծվում է կանացի կերպարի այլաբանության դերը երկրի կառուցման գործընթացում: Փաստորեն կոնց մարմինը դառնում է յուրահատուկ միջոց՝ հոգևոր տիրությ, այսինքն՝ ազգային պետականություն հաստատելու ցանկության արտահայտման համար:

Պատմության քառուղիներում հայոց թագուիինները աջակցել են իրենց անուսիններին, մասնակցել կառավարման, բարգավաճման ու պաշտպանության գործի¹: Հայոց դիցուիինները ներկայացնում են հայ կոնց, նրա կանացիության ու արարչագործության առաքինությունները, մայորության և օջախի պահապանի սրբացված կերպարները: Հին հունական, իրանական և արևելյան դիցաբանական պանթեոններում ունենալով իրենց համարժեքները՝ նրանք միաժամանակ ծնունդն են հայ հողի ու հայկական միջավայրի: Բարոյականության և ողջախոհության տիպարներ են մեր ազգային էպոսի՝ «Սասնա Ծոերի» դիցաբանական ծագում ունեցող հերոսուիինները՝ Ծովինարից մինչև Խանողութ խաթուն: Հավատարմությունը և հնագանդությունը դեռևս այդ շրջանից հայ թագուիիններին բնորոշող և հայ կնոջը վայել հատկանիշներ էին: Հայաստանում քրիստոնեության տարածման ամենահայտնի գործիչները ըստ լեզենդի Հոփիսիմյանց և Գայանյանց կույսերն էին, որոնց նահատակության վայե-

¹Տես «Հայություններ», հատ. 1, Երևան, 2011, էջ 10:

րում մինչև այժմ հայտնաբերվում են անտիկ դանքարանադաշտեր, և հեթանոսական աստվածությունների պաշտամունքային վայրերում կառուցվել են Եկեղեցիներ՝ հանձինս Գայանեի, Յոհիվսիմեի, Շողակարի և այլն: Սրբուհիների որոշքորած հավատի հաստատակամությունը մենք տեսնում ենք հաջորդող վկայուհիների կյանքում, ովքեր աներեր դեպի նահատակության գնացին, մերժելով օտար բռնավորների պահանջը՝ ուրանալու իրենց հավատը: Յայ կնոց կերպարը հավերժացվեց Խոսրովդուխտի, Փառանձեմի, Երատոյի, Շուշանիկի, Սանդուխտի, Մլքյի կերպարներում: Նման օրինակները բազմաթիվ են:

Լոնդոնի Բրիտանական թանգարանում գտնվող և մ.թ.ա. II դարով թվագրվող հռոմեական դրամների վրա «Պարտված Յայաստան»¹ գրությամբ ներկայացված էր ծնրադիր «Յայաստանը»՝ թագուհու կերպարով, գլխին ատամնավոր թագ, որպես պարտյալ նրան ներկայացրել են մի պարզ պարեգոտով, որի տակից երևում է Երկար ու նեղ փողքերով անդրավարտիքը՝ ըստ հայապարթ տարագի:

II դարի մի արձան, որը այժմ գտնվում է Նեապոլի Պոսեյդոնյան թանգարանում, ներկայացնում է «Արմենիան»²՝ Յայաստանը կնոց կերպարով, թուրը ծեռքին: Յոռմեական կայսրության տիրույթները ներկայացվում էին յուրաքանչյուր Երկրին տիպական մի կերպարով: Յետաքրքիր է, որ Յայաստանը խորհրդանշվում է հայապարթ և տարագով և կնոց կերպարով³: Նրա գլխարկը վերևից հատած կոնաձև է, ծոծրակակալով, բազմածավալ մի թիկնոց ուսերի վրայով ճարմանդով հավաքված է աջ կողմում: «Արմենիան» հագել է մի Երկար վարտիք՝ գոտիով ամրացված, և փեշերը վերև բարձրացված Երկարաթի պատմուճան: Պատահական չէր Յայաստանը պարտված կնոց և ծնրադիր թագուհու կերպարով ներկայացնելը: Կնոց կերպարով Յայաստանը պատկերելը ուներ սերտ առնչություն մեր հզոր թագուհիների և Մայր աստվածուհիների հետ:

Անտիկ շրջանում Երկրի խորհրդանիշ և հովանավոր, «Ամենայն զգաստության մայր» և «Ազգի կեցուցիչ» էր համարվում Անահիտ դիցուհին: Երբ Տրդատ թագավորը 301 թ. քրիստոնեական հավատ ընդունեց, հայկական Աֆրոդիտե-Անահիտ աստվածուհու կերպարը փոխարինվեց Մարիամ Աստվածածնի կերպարով: Վերջինս ժառանգեց մի շարք պատկերագրական և կերպարային հատկանիշներ:

Մայր դիցուհու միասնական կերպարը Յայաստանում առասպելաբանական պատկերացումների զարգացման ընթացքում Երկիթեղկվելով ծնունդ է տվել Երկու տարրեր դիցուհիների՝ մայր Երկրի (հողի) անձնավորում Անահիտի⁴ և ջրային տարրերի անձնավորում Աստղիկի կերպարներին:

Անահիտ և Աստղիկ⁵ աստվածուհիների պաշտամունքը ուներ որոշակի ընդիանություններ: Յնարավոր է, որ Աստղիկ և Անահիտ⁶ անունները սկզբում միևնույն սիրո, պտղաբերության և ջրի աստվածության տարրեր անվանումներն են Եղել: Սա-

¹ Տես Առաքել Պատրիկ, «Յայկական տարագ», Երևան, 1967, էջ 21:

² Նույն տեղում, էջ 20:

³ Տես Քին Յայաստանի պատմության և մշակությի հարցեր, Երևան, 2001, Ավետիլանա Պողոսյան, էջ 75:

⁴ Արամազդի դուստրը կամ կինը ներկայացվում է Անահիտ աստվածուհին՝ հայոց անձնապիրելի և պաշտելի դիցուհին: Որպես մայր աստվածուհի սովորաբար պատկերվում էր Երեխան գրկին՝ հայ մայրերին կամ կանանց բնորոշ գլխի հարդարանքով, մինչև ուսերը իշնող գլխաշղորով:

⁵ Կևոնդ Ակիշան, «Յայաստան առաջ բան գլխաւեն Յայաստան», Վենետիկ, 1904, էջ 226: «Անահիտ և Աստղիկ սկզբնապես Եղել են միևնույն դիցուհու տարրեր կոչումները. մեկը դիցուհու «Անատու» մականունից, մյուսը՝ նրա սիմբոլ Արուսյակից-Աստղիկից»:

⁶ Տես Միքի նարում միացած եղել են միևնույն դիցուհու տարրեր կոչումները. մեկը դիցուհու «Անատու» մականունից, մյուսը՝ նրա սիմբոլ Արուսյակից-Աստղիկից»:

կայն հետագայում առանձնացրել են և ինքնուրույն աստվածություններ դարձրել: Անահիտը անշուշտ իր ավանդական պատկերագրությունն ուներ, որը պետք է արխայիկ բնույթ և սխեմատիկ ձևեր ունենար, ինչպես Յայաստանի անտիկ շրջանի մյուս արձանները¹: Դվինից մեզ են հասել ավանդական պատկերագրությամբ (նման Մերձավոր Արևելքի և միջինասիհական հուչարձաններին) պտղաբերության և ծննդաբերության խորհրդանշական նշանակությամբ երկու արձան (մ.թ.ա. I հազարամյակի առաջին կես): Նրանցից մեկը ձեռքով բռնել է կրծքերը (կամ գուցե նռներ), և նմանվում է Միջին Ասիայում հայտնաբերված Անահիտի արձաններին: Յավանաբար, այստեղ մենք ունենք Մայր աստվածութու՝ Անահիտի ավանդական պատկերներից մեկը, երբ նրա գործառույթները դեռևս ավելի սահմանափակ են. ըստ Երևույթին այդպիսի արձաններ են կանգնեցվել Անահիտական մեհյաններում:

Անահիտը, ինչպես հելլենիստական Իրանում, այնպես էլ Յայաստանում համադրվեց «Թագուհի Արենասին»² ռազմատենչ աստվածություն, կույսերի հովանավորին: Նա հանդես էր գալիս որպես Երկրի հովանավոր Մայր աստվածութի, թագավորական իշխանական տների և պատերազմների ժամանակ թագավորներին հաղթանակ պարգևող և խնամակալ դիցուիի: Արմավիրի հունարեն արձանագրությունը խոսում է Անահիտի մասին որպես ամենառազմատենչ աստվածութու, իսկ Գրիգոր Տաթևացին գրում է, որ թագավորները զորություն էին խնդրում Անահիտից՝ իրենց թշնամիներին հաղթելու և Երկիրը դեկավարելու համար: Արենասը, իբրև Անահիտ, պատկերվել է Արտաշեսյանների դրամների վրա: Սիսիանի իշխանական դամբարանից գտնված Արենաս Պալլասի պատկերով մեդալյոնը նույնպես վերագրվել է Անահիտին:

Անահիտը համադրվել է նաև հաղթանակի հունական Նիկե աստվածութու հետ: Վերջինիս կողմից թագավորին դափնեպսակ մատուցելու թեման լայնորեն տարածված էր հելլենիստական արքեստում: Իսկ Նիկեն Յայաստանում և Իրանական աշխարհում կարող էր նույնացվել միայն Անահիտի հետ: Յետաքրքրական է նաև, որ Սասանյան քանդակների ծիսական տեսարաններում իշխանության և հաղթանակի խորհրդանշան դափնեպսակը արքային է հանձնում Անահիտ աստվածուին: Նիկեն Յայաստանում պատկերվել է հայ թագավորների դրամների վրա, ըստ որում և դափնեպսակով, և արմավենու ճյուղով³: Նիկե-Անահիտի ցայտուն տեղական պատկերն է վերարտադրված նաև Սիսիանի Երկրորդ մեդալյոնի վրա⁴:

Անահիտը, իբրև Արտաշատի հովանավոր համադրվել է նաև Տյուխեյի հետ, որի արձանը Սելևկյանների օրոք կանգնեցվել է Անտիոքի մոտ, բարձունքի վրա, Օրոնտես գետի ափին: Անահիտի⁵ պատկերագրության ուսումնասիրության տեսակետից ուշագրավ են մոր և մամկան կավե արձանիկները: Այտեղ մենք գործ ունենք Անահիտի առավել ուշ պատկերագրության հետ, երբ հայկական դիցարանի աստվածները

¹ Տե՛ս Բ. Ն. Առաքելյան, «Ակնարկներ իին Յայաստանի արվեստի պատմության», Երևան, 1976 թ., էջ 14-20:

² Հելլենիստական շրջանում Արենասը ամենասիրվածն էր աստվածությունների մեջ, բացի այդ էլ համարվում էր Արենիի հովանավորը, մաքության, անաղարտության, կրթության խորհրդակիշն էր: Յայաստանում նույնացվել է նաև ի և Անահիտի հետ:

³ Տե՛ս Խ. Ա. Մուշեղյան, Քին Յայաստանի դրամային շրջանառության պատմությունից, ՊԲՀ, 1970 թ., № 3, էջ 70-71:

⁴ Տե՛ս Ժ. Ղ. Խաչատրյան, Յայաստանի անտիկ շրջանի մեդալյոնները (մ.թ.ա. II-մ.թ. I դ.դ.), ՀՍՍՀ ԳԱ, ԳԱ, «Լուսաբեր հաս. գիտ.», 1978 թ., № 5, էջ 48-54:

⁵ Տե՛ս Առաքելյան Բ., «Արտաշատ I. 1970-1977 թթ. պեղումների հիմնական արդյունքները», Երևան, 1982 թ., էջ 173-174:

հանդես են գալիս հունականի հետ համադրման եղանակով: Կավե արձանիկի կանացի պատկերը միանգանայն համապատասխանում է Ազաթանգեղոսի փառաքանած կանացի բոլոր առաքինությունների մայր Անահիտ աստվածուհու կերպարին և ննան չէ Անահիտի ոչ իրանական և ոչ էլ ասիական տեսքին:

Տիգրան Մեծի և նրա հաջորդների օրոք Անահիտը դարձավ պաշտոնական դիցարանը գլխավորող Երյակի ամենազդեցիկ և ամենալայն հեղինակություն վայելող աստվածուհին: Կավե արձանիկների¹ վրա շեշտված են նրա «Մայր ամենայն զգաստութեանց», «համայն Յայոց աշխարհի հովանավորի ու պահապանի, արգասավորության, Մեծ մոր» հատկանիշները: Ահա թե ինչու Յայաստանից հայտնաբերված Անահիտի պատկերները նկատելիորեն տարբերվում են մյուս երկրների մայր աստվածուհիների պատկերներից:

Քրիստոնեության ընդունումից հետո Անահիտի² և Աստղիկի պաշտամունքային վայրերում կառուցվեցին Աստվածամորը³ և Քրիստոսին նվիրված եկեղեցներ և վանքեր, իսկ նրանց տոները փոխարինվեցին Աստվածամոր տոներով: Քրիստոնյա քարոզիչները, անընդհատ հակադրելով հեթանոս աստվածուհիների և քրիստոնեական Աստվածամոր կերպարները, ձգտում էին ընդգծել Աստվածածնի գերակայությունը և նաքրությունը՝ նրանց համեմատ:

Դ. Ալիշանը այս առիթով գրում է. «**Ի՞նչ զարմանալի փոփոխութիւն և աննման յարմարութիւն: Աստղկան և Անահիտայ ոսկեծղի և ոսկեծոյլ, ոսկիամայր անդրեաց տեղ, փայտեայ խոշոր անշուր պատկեր մը. բայց կերպարանաժը անոնց-մէ մեծ, աստուածային Խսկուիւյ մը, ոչ քեռ և դստեր կամ կնոջ դից, այլ Սօր Աստուծոյ, և անամուսին մօր. որ է ըսել կին և կոյս. միով բարի Կուսամայր. հրաշալի՝ բան, բոլոր հեթանոսաց իմաստութենէն վեր. որք Աստղկայ և Անահիտայ նման մենասէր կոյսեր առին իրենց շնորհացը համար դարձուցին ‘ի բող և ի բովը կանայս. քրիստոնեայմ՝ Կուսի մը գերագոյն շնորհը իր հաւերժ կուսութիւնը ծանչնալով՝ հաւատաց զնա մայր Աստուծոյ, և միոյ միայնոյ Աստուծոյ. որով և միայն Տիրուիի Երկնից և Երկրի»⁴.**

Մարիամ Աստվածածինը և Քրիստոսը սկեցին պատկերվել նոյն ձևով, ինչպես Անահիտի վերոհիշյալ մոր և մանկան արձանիկները: Այսինքն Անահիտի՝ իբրև կանացի բոլոր առաքինությունների մոր պատկերագրությունը միանգանայն համապատասխանում էր նոր կրոնի Տիրանոր կերպարին:

Մարիամ այս բազմաֆիզուր արձանիկները ներկայացնում էին ոչ միայն մորը և մանկանը, այդ պատճառով չէին կարող ուղղակի խորհրդանշել պտղաբերության և կյանքի հարատևության գաղափարը: Այդ հատկանիշներն առավել շեշտելու համար Անահիտը պատկերվել է մեկ կամ երկու երեխաների հետ, կամ Արտաշատի կամ Արմավիրի արձանիկների նման երեխաների և տղամարդու հետ, ինչպես, օրինակ, Եփեսոսյան Արտեմիսը այդ հատկանիշներն առավել շեշտելու համար պատկերվել է բազմակուրծք: Այստեղ Անահիտի պաշտամունքի ուշ հելլենիստական շրջանի պատկերացումների ազդեցության միախառնման արդյունքն ենք տեսնում, որն

¹ Տե՛ս Ժ. Դ. Խաչատրյան, «Յայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան», «Լրաբեր ՅԳ», Երևան, № 3, 1977 թ, էջ 41-42:

² Աստվածածինի պաշտամունքը Յայաստանում և սրբատեղիների, և տոների ու ուխտագնացությունների քանակը գերազանցում է նույնիսկ Քրիստոսի և այլ սրբերի պաշտամունքին:

³ Տե՛ս Կ. Վ. Մելիք-Փաշայան, նշվ. աշխ., էջ 138-148:

⁴ Ալիշան Դ., «Բազմավեպ», Վենետիկ, 1862 թ., էջ 229-230:

ավելի էր համապատասխանում Հայաստանի և ընդհանրապես անտիկ հասարակության պատկերացումներին:

Միջնադարում բազմաթիվ հայուհիներ դարձել են Հայաստանի հարևան քրիստոնյա տերությունների, արաբական երկրների թագուհիներ և իշխանուհիներ, իսկ նրանցից 10-ը՝ Բյուզանդիայի կայսրուհիներ: Բոլոր ժամանակներում հայուհիները օժտված են եղել արարչագործությամբ և ողջախոհությամբ:

Այժմ հեթանոսական շրջանից անցում կատարենք Խորհրդային Հայաստան, իսկ «Մայր աստվածուհի Անահիտից»՝ «Մայր Հայաստան»: Հատկանշական է, որ «Մայր Հայաստանի» կանացի կերպարը շուրջ 2000-ամյա գարգացման ընթացքում չկորցրեց ժողովրդի մեջ իր ավանդական պատկերումը: 1967 թ.-ին կանգնեցված Արա Հարությունյանի «Մայր Հայաստանը» տեղադրված է հսկայական պատվանդանի վրա, որը կառուցվել է Ռաֆայել Խարայելյանի նախագծով: Այն ներսում հայկական գմբեթավոր եռանավ եկեղեցի է, և իր լուծումներով հիշեցնում է Էջմիածնի Հռիփահմե տաճարը: ճարտարապետն այդպես կարծես արտահայտել է իր ընբոստությունը խորհրդային կաղապարված գաղափարների դեմ և շեշտել է հավատարմությունը ազգայինին:

«Մայր Հայաստանը» մայրաքաղաքի ամենամեծ հուշակորողն է, որի բարձրությունն առանց պատվանդանի 22 մետր է, իսկ պատվանդանով՝ 52 մետր: Ժամանակին պատվանդանին կանգնեցված է եղել խորհրդային ժողովուրդների «մեծն հայր» Խոսիֆ Ստալինի հսկայական արձանը: 1960-ականների սկզբներին վերջինիս փառքի տապալման հետևանքով որոշում է կայացվում քանդել հուշտեղին:

Այդ ժամանակ Հայաստանի Կենտկոմի առաջին քարտուղարի պաշտոնը ստանձել էր Անտոն Քոչինյանը: Նա էլ պատվանդանի վրա նոր քանդակ կանգնեցնելու պատասխանատու գործը հանձնարարում է Երիտասարդ և մի քանի հաջողված աշխատանքներով հայտնի քանդակագործ Արա Հարությունյանին: Նա Երկար ժամանակ չէր կարողանում բնորդ գտնել: Երբ մի օր պատահաբար անցնում էր Կիկյան կամրջի հարևանությամբ գործող բանջարեղենի փոքրիկ շուկայի կողքով, լոլիկի հերթի մեջ մի գեղեցիկ աղջկա է նկատում՝ մոր հետ: Երկար զննում է նրան և հեռանում: Անձանոթի ակնդետ հայացքը չի վրիպում մոր ու աղջկա ուշադրությունից: Երբ Երեկոյան մայրն այդ մասին պատմում է որդուն, որն այդ ժամանակ ստվորում էր գեղարվեստարատերական ինստիտուտում, վերջինս ճանաչում է իր դասախոս Արա Հարությունյանին: Շուտով պարզվում է, որ քանդակագործը որոշել է 18-ամյա ժենյա Մուրադյանին դարձնել իր քանդակի նախաօրինակը: Երկար բանակցություններից հետո Երիտասարդ աղջկան ծնողները թույլ են տալիս ժամանակ առ ժամանակ գնալ Արա Հարությունյանի արվեստանոց՝ միայն երբայրների ուղեկցությամբ:

Մեծ ներշնչանքով կերտվեց «Մայր Հայաստանը»՝ հայ կնոջ, հայ մոր հավաքական կերպարը: Քանդակագործը բազմաթիվ ճեպանկարներից հետո վերջապես ստեղծում է կոթողի ներկայիս տարբերակի նմուշը: Սակայն դա հեշտությամբ չի հաստատվում Կենտկոմում: Պատճառը վեր պարզած թուրն էր, ինչն էլ պաշտոնական որոշ այրեր մեկնաբանում են որպես ագրեսիայի նշան: Խորհուրդ է տրվում թուրն իջեցնել: Արա Հարությունյանի որդի Արամը հիշում է, որ այդ տարիներին հայրը սարսափելի տվյալանքների մեջ էր. նա կերտել էր հայ կնոջ հերոսական կերպարը՝ պատրաստ պաշտպանելու ընտանիքը թշնամուց: Մեր ազգային գիտակցության բարձրացման և պահպանման գործում դա մեծ դեր պետք է ունենար: Այնինչ

հայ պաշտոնյաներից ոմանք Մոսկվային հրահրում էին գործը իբրև ազգայնամոլական դրսերում որակելու: Իր մտահոգությունը վարպետը հայտնում է Կենտկոմի առաջին քարտուղարին: Վերջինս ամեն ինչ անում է, որ քանդակն իր նախնական տեսքով հաստատվի: Պետական հովանավորությանը, հեղինակի ու բանվորների դժվարին աշխատանքով արձանն ի վերջո ձուլվում է: Այն մի քանի պղնձաձույլ կտորներից էր, որոնք պետք է վերջնական տեսքի բերվեին արդեն «Հայրանակի» գրուայգու բարձունքում՝ եռանավ բազիլիկ եկեղեցու աստիճանաձև պատվանդանի վրա¹:

Կոքողի ամբողջացման աշխատանքները տևում են մինչև 1967 թ. նոյեմբեր: Սակայն նրա բացումը բավականին անշուր է անցնում, իսկ քանդակագործ Արա Յարությունյանը պետական որևէ մրցանակի չի արժանանում: Ժամանակն ավելի մեծ դատավոր է, քան տվյալ ժամանակաշրջանը, իշխող վարչախումբը: Այն իրողությունը, որ «Մայր Հայաստանը» չի կորցրել նշանակությունը, ինքնին փաստում է արվեստագետի հեռատեսության և մեծ տաղանդի մասին: «Մայր Հայաստանի» պատկերագիրը հստակորեն ունի խաչի կառուցվածք: Հուշարձանը եկեղեցու վրա կանգնեցնելը՝ կնոջ այլաբանական կերպարով, ձոնված էր տղամարդկանց հիշատակին՝ չնայած բովանդակում էր կանացի մարմնի գեղեցկությունը: «Մայր Հայաստան» ուներ որոշակի պատգամ. հավատի և հայրենիքի նկատմամբ սիրո շնորհիվ հայ ժողովուրդը դարեր շարունակ պայքարել է հանուն սեփական ազատության: Հավատի համար բազմաթիվ դարեր թափվել է հայի արյունը: Հայրենիքի և հավատի միավորումը սրբագրվեց Սարդարապատի և Ղարաբաղյան հերոսամարտի հաղթանակներում:

«Մայր Հայաստան» հուշարձան է կանգնեցվել Գյումրիում 1975 թ., որի քանդակագործներն էին Ա. Սարգսյանը և Ե. Վարդանյանը, իսկ ճարտարապետը՝ Ռ. Եղոյանը: Մայր Հայաստանն այստեղ ներկայացված է կիսամերկ, որի մի ձեռքում զվարենցյան խոյակն է, իսկ մյուսում՝ ցորենի հասկը: Դիմագներով ննանվում է Անահիտ դիցուհուն, իսկ դեմքն արտահայտում է ժպիտ ու ինքնավստահություն, հզոր Հայաստանի կերպարը՝ կանացի նրբագեղությամբ:

Կնոջ կերպարը պատերազմի հուշարձաններում ենթադրում է մարդու մարմնի և երկրի փոխհարաբերություն: Կանայք ռազմի դաշտում զենք են վերցրել և տղամարդու հետ պայքարել հանուն հայրենիքի ազատության և հավատի հաղթանակի: Իսկ երբ մայրերն են զենք վերցնում, այդ պահից արդեն թշնամին պարտվում է: Հայրենիքն էլ է մայր, և մայրն էլ հայրենիք. մորից է սկսվում հայրենիքը, որա համար էլ սահմաններ չունի, հայրենիքը մեր սիրո սահմաններն են: Զինվորի մայրը և երկրի պահապանը նաև զինվոր է, որը հանուն որդու զենք է վերցնում և պայքարում սեփական զավակների ազատության համար: Անշուշտ, Արա Յարությունյանը չէր տեսել Նեապոլի Պուսեյրոնյան թանգարանի «Հայաստանը», սակայն «Մայր Հայաստան» հնագույն կերպարը նրա պատկերացմանը ննանվեց այդ մարտնչող կնոջ զինական կերպարին:

¹ 1970 թ. հուշարձանի պատվանդանի ներսում ստեղծվում է թանգարան, որը նվիրված է հայ ժողովովի մամնակցությանը Հայրենական մեծ պատերազմին: Իսկ 1995 թ., երբ թանգարանն անցավ Պատմական շարժմանը նվիրված թանգարան: Այն տեղ ներկայացված է նաև վերջին դարերի հայ ազատագրական պայքարի նմուշներ:

Արա Յարությունյանի կողմից կերտված «Մայր Յայաստանը» վկայակոչում էր հայ ժողովրդի ինքնազիտակցության մեջ և պատկերացումներում ապրող օջախի և Երկրի պահապանի և միաժամանակ պատերազմող դիցուին կերպարը:



«Արմենիա»՝ Հայաստանի անծնավորությամբ քանդակի
վերակազմությունը Նեապոլի Պոսեյդոնյան թանգարանից, մ.թ. 2-րդ դար



**«Հայաստանը պարտյալ» թագուհու անձնավորմամբ դրամները Լոնդոնի
Բրիտանական թանգարանից, մ.թ.ա. 2 դար**



**Նեմրութ Դաղի հեթանոսական աստվածների արձանները.
Կենտրոնում Կոմմագենե թագուհին**



«Աֆրոդիտե-Աստղիկի գլխարկը Սատաղից», Երզնկա, Զ. Ա. 4-րդ դար,
բրոնզ, Լոնդոնի Բրիտանական թանգարան



«Նստած օդիգիորիա տիպով Տիրամայր», Օձունի գմբեթավոր
բազիլիկայում, հարթաքանդակ, 5-7 դդ.



1. Արա Հարությունյանի կերտած «Մայր Հայաստանը», Երևան, «Հաղթանակի» գրոսայգի, 1967 թ.: 2. Գյումրիում «Մայր Հայաստանի» հուշակոթողի կրկնօրինակը, 1975 թ.: 3. Մանյա Ղազարյանը 18 տարեկանում՝ Արա Հարությունյանի արվեստանոցում:

Виктория Василян, Древнейшие прототипы Матери Армении - В статье рассматривается вопрос о создании Ара Арутюняном памятника Матери Армении и о его языческих корнях. В Армении с древнейших времен богини-матери и девы-воительницы отождествлялись с родиной и считались покровительницами и хранительницами родной земли и страны. Их иконографические изображения стали прототипом для Богоматери и Христа в древнеармянском искусстве. Во время своего 2000-летнего развития античная женская аллегория "Армении" возрождается в памятнике Ара Арутюняна "Мать Армения".

Victorya Vasilyan, The most ancient prototypes of Mother Armenia - The article discusses the question about Ara Harutyunyan's creation - The Monument of Mother Armenia, and it's pagan roots. In Armenia since the most ancient times the goddess mother and the Virgin-Warrior were identified with the homeland and were considered as patronesses and keepers-guardians of the native earth and the country. Their iconographic isofermentations became a prototype for the Mother of God and Christ in ancient Armenian art. During 2000 years' development the antique female allegory of "Armenia" revives in the monument by Ara Harutyunyan "Mother Armenia".
